



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9684

891.99  
P-27



891.542-3


Р-27

ԵՐԱՄԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՅՐՈՒԹԻՒՆ:

ԵՐԿՈՒ  
ՎԵՊԻԿՆԵՐ

ԵՒ

ՄԻ ՔԱՆԻ ՈՏԱԱԿՈՐՆԵՐ



ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑԻ:



Բ. Ա. Գ. Ո. Ւ

ՏՊԱՐԻՆ Ս. Բ. ՏԵՐՅԱՎՀԱՆՆԵԼԵԱՆՅԻ:

1887

Ա. Ազգային

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՆԱՐԱՑԻՒՅԻՆ:

891.99

Բ - 97

241

# ԵՐԿՈՒ ՎԵՐԻԿՆԵՐ

ԵԽ

ՄԻ ՔԱՆԻ ՌՏԱՆԱԻՈՐՆԵՐ

1001  
1546

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ԹԱՌԱՅԵԱՆ ՑԻ:



Բ. Ա. Գ. Ո. Ւ.

Ա. ՏԵՐ-ՑՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ:

1887

2355

## ԱԻԱԶԱԿԱՊԵՏ

Дозволено цензурою Тифлисъ 24 Июня 1887 года.

2003

Կարդալով „Աւազակապետ“ վերնագիրը, ընթերցողը պիտի կարծէ, թէ ես իրան վէպ կամ մի ուրիշ բանաստեղծական գրուածք եմ առաջարկում կարդալու։ Բայց եթէ փոքր ինչ համբերութիւն ունենայ, նա պիտի տեսնէ որ իմ պատմածս մի իրողութիւն է, որը շատ անգամ պատահում է մարդկային կեանքի մէջ։ Նա պիտի համոզվէ, որ շատ անգամ հասարակութեան անդամները և նրա վատ կազմակերպութիւնը իրանք են ստեղծում պատուհաններ, տխուր երևոյթներ, մեծ վնասներ հասարակութեան համար։ Վերջինս զգում է, թէ այդ անբաղտութիւնները նախախնամութիւնից ստացված պատիժներ են։ Այդ ուղիղ է, որովհետեւ ամեն մի պատուհաս ուրիշ մի բան չէ, եթէ ոչ մի շաբք սխալների արդեւնք, որ գոյութիւն է ստանում բնութեան օրէնքների հիման վրա։ Այս տեսակէտից պարզ է, որ ամեն մի փորձանք

պատիժ կարելի է համարել սխալների համար: Բայց  
բանը նրանումն է որ մարդիկ չեն կարողանում ուղեղ  
որոշել, թէ ո՞ր սխալներից յառաջ են գալիս ո՞ր  
պատուհանները կամ տխուր երևոյթները և ընկնում  
են մելորութեանց մէջ:

I.

Ոսկանը մէկ մշակ էր, որ առաւօտից մինչեւ  
երեկոյ գործում էր մի որ և է պարոնի այգումը  
և միայն ցամաք հացի փող ձեռք բերելով, միաց-  
նում էր նրան իր կնոջ, թամամի, աշխատածի հետ:  
Այդպիսով նրանք կերակրվում էին և կերակրում  
էին իրանց միակ որդի Աէրանին:

Թամամը հացթուխ էր, որ ամեն մի թոնրի հա-  
մար ստանում էր մէկ փափուկ հաց և տասն կոտէկ  
դրամ: Նա յաճախում էր ընդամենը ութ տներ:  
Եթէ հաշւենք, որ ամեն մի տունը ամիսը չորս  
թոնիր հաց էր ուտում, կստանանք որ թամամը առ-  
նում էր մօտաւորապէս երեսուն երկու նոր թխած  
հաց և երեք րուբլի քսան կոտէկ դրամ: Բացի սրա-  
նից նա շաբաթը երկու երեք անգամ աշխատում  
էր ներսէս աղի կնոջ համար. մի օր շորեր էր լուա-  
նում, միւս օրը հիւրերի համար կերակուր էր պա-  
տրաստում և այլն: Այդպիսով էլ գոյացնում էր  
մօտ երեք րուբլի ամսական:

Ոսկանը նոյնպէս ըստ մեծի մասամբ գործում  
էր Ներսէս աղի այգում և լաւ գործ եղած ժա-  
մանակը բերում էր տասն րուբլի ամսական: Այդ  
փողերով նրանը, թէև նեղութեամբ, բայց այնու-  
ամենայնիւ ապրում էին: Ամենայն ամիս չորս րուբ-  
լի տան քրէհ էին տալիս, երկու րուբլի հացի  
պակասն էին լրացնում, մէկ րուբլի պանիրի, մէկ  
րուբլի մսի, մէկ րուբլի թէյ ու շաքարի, մէկ րուբլի  
ածուխի և փայտի, մէկ րուբլի ուսումնարանին.  
մէկ րուբլի էլ հագուստի, ուսումնարանական պի-  
տոյքների, բաղնիսի և ուրիշ մանր մունր բաների  
համար էր ծախսվում: Երեք չորս րուբլի էլ յե-  
տաձգում էին ձմեռվայ համար, որովհետեւ այդ  
ժամանակ Ոսկանը շատ օրեր պարապ էր մնում:

Ոսկանը անուս մարդ էր և ոչ մի արհեստ չը  
գիտէր, որովհետեւ նրա հանգուցեալ հայրը մէկ  
խեղճ զիւղացի էր եղած, որը իր մահից մի տարի  
առաջ կորցրել էր իր բոլոր ունեցածը շնոր-  
հիւ պարտաւէր չարչիների: Ոսկանն էլ վերցնելով  
կնոջը, եկել էր քաղաք մի կտոր հաց գտնելու:  
Նա բնական իսելք ունէր, բայց մարդկանց մօտ  
թագյնում էր նրան, այսինքն շատ քիչ էր խօսում,  
որովհետեւ, ինչպէս ինքն ասում էր, աղքատու-  
թիւնը կնիք էր զրել նորա բերանին: Կարծեմ  
այսքանն էլ բաւական է, որ ընթերցողը մի գաղա-  
փար ունենայ Ոսկանի մասին, որի հետ համարեայ

մենք գործ չենք ունենալու:

Թամամամբ ժիր, խօսելու ընդունակ, քաջասիրտ և առողջ անձն ունեցող կին էր: Նրա բնաւորութիւնը սիրելի էր, ինչպէս առհասարակ լինում է հայ հացթուխի կանանց բնաւորութիւնը: Դէմքով թէւնա շատ գեղեցիկ չէր, բայց, ինչպէս ասում են, „սև աչք ու սև ունք”, ունեցող կին էր:

Նորանց որդի փոքրիկ Սէյրանն էլ թէւ զեռ տասն տարեկան էր բայց քեւ չէր օդնում իր մօրը: „Սէյրան, հայրդ շուտով կը դայ. ջուր չկայ խմելու,, ասում էր Թամամբ: Եւ ահա հինգ րոպէից յետոյ Սէյրանը տնքալով վայր էր դնում սառը ջրով լրցրած կուժը:

— Սէյրան, մեռնեմ քեզ համար, քթախոտիս արշկիկը Եղիսէ բաջիկ մօտն է մնացել գնա բեր. Սէյրանը իսկոյն վազում էր: Մի խօսքով նա մեծ մսիթ արութիւն էր Ոտանի և Թամամի համար: Մարդ ու կնիկ նորան աւելի էին սիրում, բան թէ միմիանց:

Գալով Սէյրանի ուղեղին, պէտք է ասել որ նա քանքարաւոր երեխայ էր: Ի՞նչու էք զարմանում. նախախնամութիւնը քանքար բաժանելիս հարատութեան կամ աղքատութեան չէ նայում, այլ տալիս է իր ցանկութեան համեմատ: Այդ երեխան թէւ չէր փայլում իր ուսումնարանական թւանշաններով, բայց այդ ոչինչ դեռ չէ ապացուցանում: Թւանշանից երբէք չէ

կարելի ուղեղի մասին գաղափար կազմել, որպէս շատերը կարծում են: Կարդացէք բոլոր նշանաւոր մարդկանց կենսագրութիւնները, ապա դուք կը տեսնէք, որ նուրանք ըստ մեծի մասամբ կամ միջակ, կամ վատ թւանշան ստանալիս են եղել: Հասարակ մանուկը բոլոր յոյսը դնում է աշխատութեան վերայ: Նա անդադար գործում է, տասն անգամ մի և նոյնը սովորում է ու բացի իր գասերից ուրիշ ոչնչի վրա չէ մտածում: Բայց այդպէս չէր Սէյրանը: Նա „ինչը ըս կայ թիզ ու կէս, արարմունքն է դազ ու կէս,, էր: Ի՞նչեր չը կար նորա ուղեղի մէջ: Խօսում էիք նորա մօտ լուրջ հարցերի մասին, նա սկսում էր իր մտքումը քննադատել ձեզ: Ամեն բան նորան հետաքրքրում էր, ամեն բան հետազօտում էր նա, երբէք չմտածելով, որ այդ իր հասակի բանը չէ:

Դիցուք թէ նա պարտաւոր էր միւս օրփայ համար մի ոտանաւոր բերան անել: Նա մի անգամ կարդում էր և ասելով թէ „հինգ րոպէի բան է, առաւօտը կը սովորեմ, մի կողմն էր դնում: Իսկ այժմ մի՞թէ նա խաղալ էր կամենում... ոչ: Այսօր նա վերջացրել էր բարձումն, և այժմ ուղեղին ոյժ էր տալիս, որ ինքն իրանից բազմապատկութիւնը հասկանայ, չըհամբէրելով, որ մի բանի օրից յետ ուսուցեցը սովորցնէ: Ոտանաւորի մասին նա բոլորով վին մոռանում էր, որովհետեւ ։, ձիու վազելը, գայլի գալը, կատուի գնալը. ։ նորան բնաւին չէր հետաքր-

բրում, և երբ միւս օրը ուսուցիչը հրամայում էր դասը ասել, մեր փոքրիկ փիլիսօփան մնումէր շուարած: Անդունակ և ծոյլ երեխայ ես դու բացականչում էր ուսուցիչը և ամենավատ թւանշան նշանակում:

Եղյն օրը թւաբանութեան դասի ժամանակ Սէյրանն էր, որ միշտ առաջին մատ բարձրացնողն էր լինում և ուղիղ պատասխան էր տալիս: Ուրիշ անգամ դարձեալ թւաբանութեան ժամանակ Սէյրանը երբէք մատ չէր բարձրացնում, և կարծես թէ ընած լինէր: Բայց նրա ուղեղը անդործ չէր: Նա քննադատում էր այժմ տէր հօր ասած այն խօսքը, թէ „ով որ աւելի է գործում, նա աւելի երջանիկ է լինում:“, Սէյրանը այդ խօսքը իր ընակերների նման հալած խւզի տեղ չէր ընդունում:,, Եթէ այդպէս է, մտածում էր նա, ապա ի՞նչու իմ հայրը ամբողջ օրը գործելով նեղութեան մէջ է, իսկ ներսէս աղան մաղաղինի սեղանի վրա պարապ նստելով ոչ մի հոգս չունէ:,, Ահա թէ ի՞նչու էր նա կարմրում, երբ նոյն րօպէին ուսուցիչը բացականչում էր:,, Սէյրան, դու չես կարողանո՞ւմ խնդիրը լուծել:,, Տէր ողորմեայ, մտածում էր ուսուցիչը, այդ երեխան հրէշ է, ի՞նչ է, մի օր առաջինն է լինում, միւս օրը ոչինչ չէ իմանում:,,

II.

— Դէ բաւական է Սէյրան, էլ գլուխս ցաւացրիր

շատ հարցուփորձ անելով: Դու դեռ երեխայ ես. քեզ ի՞նչ հարկաւոր է ամեն բան իմանալ: Քեզ հաց էլ տալիս ենք, հազուստ էլ տալիս ենք, սիրում էլ ենք. էլ ի՞նչ ես ուզում: Կեր, խմիր, խաղ արա, դասդ սովորիր: Երբ կմեծանաս, ամեն բան կիմանաս:

„Մայրիկ, թող մի բան էլ հարցնեմ, յետոյ կը գնամ խաղալու: Ինչի՞ցն է որ ներսէս աղան մեծ մեծ տներ ունի, մագաղին ունի, ծառաներ ունի, այդի ունի, իսկ մենք ոչինչ չունենք:“

— Ի՞նչպէս թէ ինչիցն է. Աստուած նորան տուել է, իսկ քո հօրդ չէ տուել:

„Ինչո՞ւ է Աստուած նրան տալիս, իսկ մեզ ոչ: Իմ հայրիկը ներսէս աղեց ինչով է պակաս:“

— Շատ էլ ոչինչով պակաս չէ, բայց որ ինքը այդպէս է կամեցել մենք ի՞նչ պիտի անենք:

„Աստուած և Գրիսոս ջոկ ջոկ ե՞ն:,,

— Ո՞չ, մի և նոյնն է:

„Տէր հայրը երէկ ասում էր թէ Գրիսոս մէկ հարուստ մարդուն հրամայեց բոլոր ունեցածը ծախսել և աղքատների օգտին գործ գնել: Այդ ի՞նչ է նշանակում, որ Աստուած մէկին միլիոններ է պարզեւում: Իսկ միւսին ոչինչ:“

— Ա, յաչերդ ուտեմ, իսկ դու միլիոն չե՞ս, որ Աստուած մեզ տուել է: Ներսէս աղի նման քսանը իրանց բոլոր ունեցածը ինձ տան, որ քեզ իրանց տամ, կը համաձայնեմ ես: Դու ինձ համար հազար միլիոնից

Էլ աւել արժես: Այս խօսքերը ասելով բարշեց թաշ  
մամը 12 տարեկան որդու կռնից և Ճակատը համբուրեց:

„Այդ ուրիշ բան է. Ներսէս աղան էլ մի ինձ նման  
որդի ունի: Նա դեռ աղջիկ էլ ունի, իսկ մենք  
չունենք: Ասենք թէ որդին, Մովսէսը, մի դադարէ  
բան է, բայց թագուհին տեսնում չե՞ս ինչ սիրուն  
երեխայ է:“

— Սէյրան, որ լաւ ուսում առնես, մեծանաս, շատ  
փող աշխատես, էն սիրուն աղջկան քեզ համար  
կառնեմ, հա՞:

„Իսկ եթէ շատ փող չաշխատեմ, չես առնի, հա՞:  
— Ախր Ներսէս աղան իր աղջիկը աղքատ աղային  
չի տալ: Ինքը հարուստ է և հարուստ էլ փեսայ  
պիտի ունենայ: Զէ, դու աղքատ մարդու որդի ես,  
նրա վրայ յոյս մի դնիր:“

„Բայց եթէ թագուհին ուրիշին գնալ չուզէ և  
ասէ թէ աղքատ էլ լինի, ես Սէյրանին եմ գնում:  
այն ժամանակ կըտայ, հա՞:“

— Այ, անամօթ. ինչ կտրուկ կտրուկ խօսում  
ես, քո ի՞նչ այդպիսի բաներ խօսալու ժամանակդ է  
Ամաչում չե՞ս:

„Եթէ վատ բան է, ի՞նչու ես դու ինձանից հար-  
ցնում, իսկ եթէ վատ բան չէ, էլ ի՞նչու պիտի  
ամաչեմ: Այ, թագուհին եկաւ. դէ հարցրու թէ  
ում է կամենում գնալ:  
— Թագուհի, ի՞նչու ես եկել հարցրեց թամամը:

„Մայրիկն ասում է, առաւօտ դայ մեզ համար  
հաց թխի:,:“

— Թագուհի, քեզանից մի խօսք եմ հարցնելու,  
պիտի սուտ չ'ասես: Դու որ մեծանաս, ո՞ւմ ես գնալու:

„Ինչո՞ւ եմ ասում, որ դու էլ իմանաս:,:“

— Դէ ասա, քեզ կեռաս եմ տալու, եթէ Ճշմա-  
րիտն ասես:

Անմեզ երեխան վագեց և փաթաթվելով Սէյրանի  
պարանոցով համբուրեց նորան:

— Քահ, քահ, քահ. Ծիծաղեց թամամը և երկուսին  
էլ կեռաս տալով հրամայեց բակումը խաղալ մինչեւ  
որ ինքը տունը որբէ:

### III.

„Մայրիկ, դարձեալ մի երազ եմ տեսել“ յայտնեց  
Սէյրանը զարթնելով բնից մի կիրակի առաւօտ:

— Զը լինի թէ հիմայ էլ խանութիւն էիր անում,  
ինչպէս անցեալ շաբաթ փիլիսօփայ էիր դարձել  
երազիդ մէջ:

„Զէ, այդ լաւ երազ չէ:,:“

— Պատմիր տեսնեմ եթէ, կարծ է:

„Թագուհին կանգնած էր եկեղեցու դրան մօտ: Մէկ  
ահազին շուն, որ ոսկի զանգակ ունէր պարանոցից  
կախած, մօտեցաւ և կամենում էր ուտել նրան:  
Ես հարուածեցի շնին ձեռիս դաշոյնովը և սպանեցի:  
Այդ միջոցին շնի տէրը մօտեցաւ ինձ, բռնեց իմ

ականջիցս և տարաւ։ Քաղաքից դուրս եկանք, մի ուղիղ դաշտով գնացինք, գնացինք... Հազար վերստից աւել հեռացանք մեր քաղաքից։ Յանկարծ ես ազատվեցի ինձ տանողի ձեռքից և սկսեցի յետ փախչել։ Մեր քաղաքի ճանապարհը կորցնելով ես յայտնվեցի մէկ մուժն անտառի մէջ։ Այստեղ կրկին յայտնվեցաւ իմ ականջիցս բռնող մարդը առաւ ձեռիցս դաշոյնը, գլուխս կտրեց և զցեց ինձ մէկ խոր անդունդի մէջ, որի տակը դեռ չը հասած ես զարթնեցի։

— Մեղայ քեզ Տէր, ի՞նչ զարհուրելի երազ ես տեսել։ Լաւ, մի վախենայ, ոչինչ չի լինի։ Գլխատակդ վատ է եղել, էնդուր ես այդպիսի բաներ տեսել։ Շորերդ հագիր, քեզ էլ տանելու եմ Ներսէս աղանց տուն։ Այսօր նրանց երեխային մկրտում են և մեծ ուրախութիւն են անում։

Կէս օր էր արդէն, երբ Ներսէս աղան իր քսանի չափ ընկերներով սեղան նստեցաւ։ Կանայքը յետոյ պիտի ճաշէին։

Հիւրերը դեռ նոր էին սկսել գլուխները տաքաշնել, երբ Ներսէս աղի եղբօր որդին, որ Գերմանիայում ուսած երիտասարդ էր, սեղանի նախագահից թոյլտութիւն խնդրեց, որ երկու խօսք ասէ հիւրերի առաջ։ „Պարոններ, ասաց նա մենք այսօր մեծ ուրախութեամբ տօնելով իմ յարգելի հօրեղաբօրս նորածին որդու մկրտութեան օրը պիտի չը

մոռանանք, որ կան մարդիք, որոնք ոչ միայն այդ սեղանին մասնակից չեն, այլ և մեծ կարօտութիւններ ունեն։ Ինչպէս, օրինակ, մեր քաղաքում կայ մէկ երիտասարդ, որ լաւ նկարչական ընդունակութիւն ունի, բայց աղքատ լինելով ստիպված է անմշակ թողնել իր ունեցածը։ Դուք ամենքդ, ինչպէս և իմ պատուելի հայրը նշանաւոր կարողութիւն ունեցող մարդիք էք։ Եկէք հէնց այսօր ստորագրութեամբ մի բան գոյացնենք ձեր միջից, և միջոց տանք յիշեալ երիտասարդին արտասահման գնալու իր արուեստի մէջ կատարելագործվելու համար։ Երբ դեռ նա շարունակում էր խօսել, շատերը անբաւական երեսներ էին ցոյց տալիս, իսկ Աբէլ աղան մինչեւ վերջը ծիծաղում էր։ Վերջացնելով իր ասելիքը, երիտասարդը գրանից մի թերթ թուղթ հանեց և մի մատիտի հետ միասին դրեց Ներսէս աղի առաջը, որը ստորագրելով տուաւ միւսին։ Այդպէս ամենքը լուութեամբ ստորագրում էին և միւսին տալիս։ Երիտասարդը թեւեր չունէր թուչելու, բայց երբ թուղթը իր ձեռը հասաւ, նայելով նրան, սաստիկ գունաթափեցաւ։ Նա առանց թոյլտութիւն խնդրելու կրկին ոտի կանգնեց և խօսեց հետևեալը։

„Պարոններ, այդպիսի քարասրտութիւնից յետոյ, դուք յանդգնում էք դարձեալ ձեզ մարդիք անուանելու։ Դուք ի՞նչով էք մարդիք։ Նրանով որ գր-

պաններդ լիքն է...: Դու Աբէլ աղա, ուրիշ տեղեւ  
րում հարիւրներ ես փչացնում, այս տեղ կոպէկներ  
ես ստորագրո՞ւմ:,,

Երիտասարդը անմիջապէս դուրս գնաց, որի  
ետևից ամենը բարձր ձայնով, ուռայց՝ աղաղակեցին:  
Իսկ Աբէլ աղան ի նշան բարկութեան մէկ բաժակ  
ջուր խնդրեց: Սեղանի վրա ամեն տեսակ խմիչքներ  
կային, բայց ջուր չը կար: Ներսէս աղան բարձա-  
րանալով տեղիցը գնաց դէպի դուռը և հրամայելով  
ջուր բերել վերադարցաւ իր տեղը:

Երէք բոպէից յետ գրաֆինը և բաժակը ձեռին  
բռնած ներս մոտաւ մեզ ծանօթ Սէյրանը, որ այսօր  
բաւական լաւ էր հագնված: Նա լքցրեց բաժակը  
և տուեց Աբէլ աղին: Վերջինը բաժակը դարդակե-  
լով դարձաւ դէպի ներսէս աղան ասելով „ի՞նչ  
լաւ որդի ունէք, ներսէս աղա, ի՞նչ ընդունակ  
երեխայ է:,,

Կարծես Սէյրանի իր որդին կարծվելը ցածու-  
թիւն համարելով իր համար, բարձր ծիծաղեց  
ներսէս աղան և շտապով յայտնեց, որ նա ոչ թէ իր  
այլ մշակ Ոսկանի որդին է:

„Եւ ի՞նչու էր այդքան բարձր ծիծաղում, մշակ  
Ոսկանը ձեր գերապատւութիւնից պակաս չէ խօ,“  
ասաց սառն դէմքով պատանին:

— Կորիր դուրս, անպիտան գոռաց ներսէս աղան  
աջ ոտքով սաստիկ գետնին հարուածելով, կարծես

թէ գետինն էր մեղաւոր:

„Ես իմ կամքով չեմ եկել այստեղ, որ հայ-  
հոյում էլ էք: Դուք խնդրեցիք ջուր բերել ես էլ  
բերի: Իսկ այժմ փախցնում էք շնորհակալու-  
թեան փոխանակ:,,

Ներսէս աղան տեսնելով որ բանը վատ է գը-  
նում վէճին հանարքի կերպարանք տալու համար  
ծիծաղեց: Իսկ Աբէլ աղան, քարշելով իր մօտ կանգ-  
նած Սէյրանի ականջը, ասաց. „չես ամաչում:  
որ բո աղիդ այդպիսի պատասխաններ ես տալիս:“

— Իմ ի՞նչ աղաս է, չը լինի կարծում էք թէ  
ես այդ տանը ծառայ եմ: Ներողութիւն արէք,  
մշակ Ոսկանը գեռ չէ մեռել, որ ես ձեզ բնման  
աղաների ծառան լինեմ:

„Անպիտան երեխայ է, թող դուրս գնա,“ վնիթ-  
վնիթաց Յարութիւն աղան Աբէլ աղի ականջին:  
Իսկ Սէյրանը լսեց:

— Այո, ես անպիտան եմ, որովհետեւ ապրում եմ,  
մշակի գառն քրտինքի արդիւնքով: Իսկ եթէ  
իմ հայրն էլ Մոսկվայից ապրանք բերած և իրան  
անանդ ցոյց տուած լինէր, անպիտան չէի լինի:

Այդ խօսքերը Սէյրանը գիտութեամբ էր արտա-  
սանում, որովհետեւ նա իր մօրից լսել էր թէ ի՞նչ  
միջոցով են հարստացել Յարութիւն աղան և  
շատ ուրիշները: Վերջապէս նախագահը վեր կացաւ  
տեղից և Սէյրանին ականջիցը բռնած դուրս տարաւ:

“Որքան շատ էին խմնւմ,“ ասաց Աէյրանը երեսկոյեան մօրը հետ տնից ներս մանելով: Ինքը ներսէս աղան այնքան խմել էր որ սիրս վեր ածեց: Ես մտքում ասում էի, եթէ չափաւոր խմէիր և մնացեալ փողը զոհէիր աղքատ մանուկների օգտին, դու էլ սիրտ չէիր վեր ածի, նրանք էլ ուրախ կիմէին: Բայց ափառս այն սփռոցը, որ գինիով բուլովին ներկեցին: Մայրիկ, ի՞նչ արժէր նա:

— Հարիւր բուբլիով Մօսկվայումն են գնել:

“Հարիւր բուբլին տասն հազար կոպէկ է անում: Սրանով կարելի էր մատիտներ գնել և աղքատ աշակերտներին բաժանել, որ տասն տարի բանացնեն, իսկ նրանք մի ժամկայ մէջ փչացրին:“

— Դէ ի՞նչ արած, սիրելիս, աշխարհքի բանը այդպէս է:

#### IV.

Վերոյիշեալ տօնախմբութիւնից մի տարի անցաւ: Դեռ արել նոր էր ծագել թռչունները նոր բներից դուրս թռած նախաձաշիկ էին պտուում, մորեխներն էլ փափուկ խոտի մէջ վզվալով ցատկուում էին, երբ բ. քաղաքի գերեզմանատանը զլիսաբաց կանգնած էին մի խումբ մշակներ մի քահանայի հետ միասին: Նորանցից մէկը բոնած էր 13 տարօք պատանու ձեռքը, որը արտասուք թափելով աշխատում էր դուրս պլծնել, բայց չէր կարողանում:

— Համբերութիւն ունեցիր, սիրելիս: Ասսու բանն է, պիտի համբերութեամբ տանենք, ասում էր մշակը և ինքն էլ արտասուքի կաթիլները աչքերիցը ներքեւ գլորում:

“Զէ, թոյլ տուեք... ես չեմ կարող առանց նրանց ապրել... վայ, մայրիկ, հայրիկ, մւր էք գնում, ինձ ում էք յանձնել, որ գնում էք,“ հեկեկալով արտասանում էր պատանին:

— Հող էիր և ի հող գարձիս. բացականչեց քահանան և մի բուռն հող ածելով գերեզմանի մէջը, հրամայեց մշակներին լրցնել:

Վերջինները հազեւ սկսել էին գործ գնել իրանց թիերը, երբ պատանին ազատվելով մշակի ձեռքից, թռաւ գերեզմանի մէջը և ընկնելով դագաղե վրայ գրկեց նրան: „Մայրիկ մի գնա, մի գնա, ես չեմ կարող առանց քեզ ապրել... Մայրիկ, հայրիկ, ձեզ ուզում են հողով ծածկել... վերկացէք գնանք!“...

Մի բանի բոպէ այդ դրութեան մէջ թողնելուց յետ քահանան հրամայեց դուրս բերել պատանուն, որը մեծ դժվարութեամբ կատարեցին մշակները: Մինչեւ մի քանիսը աշխատում էին հանգստացնել նրան, միւսները հողով լքցրին երկու գերեզմանն էլ:

Երբ քաղաք էին վերադառնում, մի գիւղացի հարցրեց մշակներից մէկին, թէ ո՞վ էր ննջեցեալ:

„Մշակ Ոսկանը և իր կինը“ եղաւ պատասխանը:  
—Ի՞նչ է պատահել երկուսին միասին:

„Երեկվայ երկրաշարժից տունը թափվել է և  
տակն է թողել խեղճերին: Բարեբաղդաբար որդին  
տանը չէ եղել, եթէ ոչ խեղճ Ոսկանի ճրագը բու-  
լըրովին կը հանդէքր:“

—Ախր, երկրաշարժը այնքան սաստիկ չէր, որ  
տուն կործանէր:

„Երկրաշարժը սաստիկ չէր, բայց նրանց փթած  
գերաններին այն էլ բաւական էր:“

—Խեղճ երեխայ, երեխ սա է նրանց որդին, ինչ  
պէս է աչքերը ուռցրել:

„Աչքերը ուռցնելով բաւականանայ, էլի լաւ է:  
Երեկոյեան կամեցել է ջրհորի մէջը գցել իրան,  
բայց մի փոքրիկ աղջիկ պինդ գրկել է և խնդրե-  
լով հանդարտացրել:“

—Ի՞նչ անէ աղբար, հեշտ բան չէ միանգամից  
հօրից և մօրից զրկվելը ասաց հառաչելով. գիւղա-  
ցին և իր էշի պօչին հարվածելով շարունակեց  
ձանապարհը:

Մշակները Սէյրանին բերին մայրին Ներսէս  
աղանց տնից ներս և իրանք գնացին:

„Ինչո՞ւ ես այդքան լաց լինսւմ:“ ասաց մի փո-  
քրիկ օրիորդ, քարշելով Սէյրանի կռնից, „արի գնանք,  
պարտիզում ինձ հետնստենք: Աչքերդ ուռել է....  
չես տեսնո՞ւմ:“

—Ե՛կ սիրելիս, եկ տուն, Աստուծու բանն է, Եկ  
հանգստացիր, ասաց Եղիսէ բաջին, որը թէկ իր  
մարդունման առհասարակ ատում էր այդ երեխային,  
բայց այսօր ամեն բան մոռացութեան էր տուել  
համարեա:

Մի ամբողջ ամիս խեղճ որբը մնալով նրանց  
տանը, մի կողմից ժամանակի և միւս կողմից փոքրիկ  
աղջկայ քնքոյց սրտի ազդեցութեան ներքեւ սկսեց  
ծնողների ցաւը փոքր առ փոքր մոռանալ: Երբ  
առաւատները գնում էր պարտիզում նստում և  
արտասուբ թափում, իսկոյն փոքրիկ աղջիկը վազում  
էր նրա մօտ և հանդարտացնում նրան: Անթէ գու  
չես դադարի, ես էլ լաց կլինեմ:“ լինում էր նրա  
սովորական խօսքը: Բայց, անմեղ օրիորդ, դու չը  
գիտես, որ այժմ միթարելով ապագայ դառնութիւն  
ես պատրաստում քո սիրելիիդ համար:

Տասն ու երեք տարօք պատանի և ինն տարօք  
աղջիկ, իրաւ է, գաղափար չունէին իսկական ամռաւ-  
նութեան մասին և սիրում էին միմիանց անմեղ սրտով,  
բայց այդ սէրը կարող էր փոքր առ փոքր փոխարկվել:  
Վերջը ի՞նչ կլինէր: Կը համաձայն էր արդեօք Ներսէս  
աղան փեսայեացնել իրան մի խեղճորբին, որի ծնողների  
թալմանն էլ գնալը իր համար անպատճութիւն համա-  
րեց: Աղքատութիւնը մեծ բան չէր: Ներսէսական կարող  
էր մի բանի հազար րուբլի զոհելով յառաջ բերելի իր  
փեսային: Բայց քնած էր միթէ դուռը թեան

սատանան, որը բնակվում էր այդ աղայի սրտի մէջ։ Ամեն բան մենք կը տեսնենք։ Առ այժմ չը կտրենք պատմութեան թելլ։

Ոսկանի և իր կնոջ մահուանից մի ամիս անցած, Ներսէս աղան կանչեց իր մօտ նրանց որդուն։

— Սէյրան, ասաց նա, եթէ խօսք կը տաս, որ միշտ ինձ, տիկնոջդ և բոլոր քեղանից մեծերին հնազանդ լինիս, քեզ հայ հոյում են պատասխան չը տաս, ծեծում են պատասխան չը տաս ապա դու կարող ես մեր տանը մնալ, խոհանոցումը ծառայել և մի կտոր հաց ուտել։

„Հնազանդ կը լինեմ, եթէ վատ բան չը հրամային ինձ գործելու. հայ հոյանքին էլ պատասխան չեմ տայ, որովհետեւ հայ հոյողը միայն իրան է ցածացնում, իսկ ինձ ծեծել, ես ոչ ոքի թոյլ չեմ տայ։ Ես անբան անասուն չեմ, որ ինձ ծեծեն։“

Աղան աչքերը լայնացրեց և ոչ մի խօսք չը արտասանեց։ Փոքր ինչ յետոյ Սէյրանը դուրս գնաց, և մի ժամկ յետ լսեց Եղիսէ բաջիկից Ներսէս աղի հրամանը, որ պարտաւորացնում էր նորան իր համար մէկ տեղ գտնել։

### V.

Այժմ Սէյրանը ստիպվեցաւ մոռանալ ծնողների ցաւը և իր մասին մտածել։ Նա այն տեսակ պատանիներիցն էր, որոնք սիրում են օդային ամրոցներ կառուցանել որոնք միշտ սպասում են, որ իրանք

պիտի նշանաւոր մարդ դառնան, որովհետեւ իրանց մէջ մի ինչ որ ոյժ են զգում։ Առաջին անգամ գնաց նա ուղիղ իր ուսուցչի մօտ և խնդրեց իրան օգնել։ Ուսուցիչը յայտնեց, որ ինքը կարող է ձրի ուսանելու համար աշխատել։ Բայց որտե՞ղ պիտի նա ապրէր։ Յետոյ նա գնաց վարդապետի մօտ և լաց լինելով խնդրեց իրան օգնել, որ ինքը կարողանայ ուսումը շարունակել։

„Ես ի՞նչ կարող կը լլամ քեզ համար անել, որդի՛ պատասխանեց վարդապետը — „գնա, մարդու մը մօտ արհեստ մը սովորէ, կամ ծառայէ ու ապրէ։“

Վերջը գնաց մէկ Սատանայ Պետրոսի կոչված գտակակարի մօտ և խնդրեց իրան արհեստ սովորցնել։ Երբ արհեստը կը սովորեմ — մտածում էր նա — առաւօտները ուսումնաբան կը գնամ, իսկ կէսօրից յետ կը գործեմ։ Սատանայ Պետրոսը, որ իր անգութ բնաւորութեամբ յայտնի էր ամբողջ քաղաքին, սովորութիւն ունէր առհասարակ չորս հինգ տարով աշակերտներ ընդունել իսկ նրան համաձայնեց երկու տարումը սովորցնել։

„Ուստան երեխի աչքումը լոյս է տեսել։“ ասաց հին աշակերտներից մինը իր ընկերոջ ականջին և շարունակեց թելլ մօմել։

Եւ իրաւ, այստեղ պիտոյ է մի պատճառ լինէր, որ Սատանայ Պետրոսը այնպիսի թեթև պայշման առաջարկեց։ Ես չեմ ասի ձեզ, լնթեցող,

այդ պատճառը, ինչու որ եթէ ամեն բան իմանաք, շուտ կը ծերանաք: Շարունակենք:

Դեռ ասեղ բռնելը նոր էր սովորել մեր խըզանուկը, երբ ինքը և ուստան խանութում մենակ նստած ժամանակ Սատանայ Պետրոսը մի ինչոր օտարութի հրաման է տալիս նորան:

Սէյրանը գազով հարուածում է ուստի գլխին, որից արիւնը հոսում է և ինքն, հարուածողն էլ, վազում է գէպի գուրս:

Սատանայ Պետրոսը իր գլխի պատուելը ամենքից ծածուկ է պահում, իսկ գիշերը դժակով է քնում, որ կինը չիմանայ:

Մեր Խեղճ որբը դարձեալ սկսում է գործ պտուել և կօշկակար Խաչատուրի մօտն է մտնում: Բայց երբ մի շաբաթից յետ ուստայ Խաչատուրի ականջին հասնում է Սատանայ Պետրոսի տարածած լուրը, իբր թէ Սէյրանը արտաքսվել է, որովհետեւ ուստի գլուխը պատառել է, ուստայ Խաչատուրը, որ այդպիսի բաներ չէր սիրում: արտաքսում է մի երեկոյ Սէյրանին, վախենալով իր անունից:

Այժմ ի՞նչ էր մնում նրան անել: Գիշերը ուր պիտի քնէր: Ի՞նչ պիտի ուտէր.... մոլորված ոչխարի նման գնում էր նա քաղաքի փողոցներով բոյց չը գիտէր թէ ուր է գնում: Նա հասաւ քաղաքի հարաւային կողմը, որտեղից սկսվում էր վաստակած հիմքը, որը այժմ գուշակ էր արտաքսում էր վաստակած հիմքը, որը այժմ գնացող էր:

Եկողից զուրկ էր: Այս տեղ կանգնած էր մէկ հին խանութ, որի դռները տարուած և փոքրիկ պատուհանի ապակիներն էլ փշրված էին: Պատերի ծեփը թափված էր: Կեղտոտ յատակի վրա դիզուած էին գինու շիշերի կտորտանքներ, որովհետեւ վոստային ճանապարհը այստեղով եղած ժամանակ այդ խանութը գինետուն էր եղել: Ահա թէ որտեղ գիշերները քնել որոշեց այն պատանին, որը զլուխը թամամի ծծերի վրայ դրած էր քնել:

Ոչ բարձ ունէր, ոչ մի կտոր փալաս... Ամեն բան դեռ մնում էր կործանված տան պատերի տակ: Ցավում ե՞ս, ընթերցող, այդ խեղճի համար: Բայց գուցէ ինքդ տասն անգամ պատահել ես այդ որբին, որը պատառութված շապիկի մէջ մեկնել է գէպի քեզ իր ձեռը, բայց գու փայտդ պատոյտացնելով քո ճանապարհդ ես գնացել: Ոչ ոք չէ կամեցել նրան խօսացնել: Ոչ ոք չէ կամեցել տէր դառնալ նրան: Գնացէր, յարգելի պարոններ, եկեղեցի մտէր, ծունը դրէր, աղօթք արէր, արտասուք թափեցէր, մեղայ եկէր, հաղորդվեցէր, մի խօսքով ինչ կամենում էր արէր: Քանի որ գուք Սէյրաններին անխնամ էք թողնում, ես համոզված եմ: Որ քրիստոնէական կրօնին մասին բոլորվին գաղափար չունէք, որովհետեւ գուք թողել էք պըտուղը, և ընկել էք կեղեւի ետելից, գուք մարդասէր չէք, բայց բուլը ծխակատարութիւնները անում էք:

Գիշեր էր արդէն, երբ մեր խղճալին յուսաշատուած, վախեց դողալով մեկնվեց սառն յատակի վրա և քնեց:

VII.

Երեկոյ էր: Զիւնը ծածկել էր փողոցները և շարունակում էր հանդարտութեամբ տեղալ: Տղաւ մարդիք կռները նաւակի թիերի նման շարժելով իսկ կանայք մետաքսեայ չարսաւների մէջ փաթաթված դուրս էին եկել եկեղեցուց ու դէպի տուն էին գնում:

Այս երեկոյեան եկեղեցուց դուրս եկողների թիւը սովորականից աւելի էր, որովհետեւ միւս օրը ջրօրհնէրի տօնն էր: Փողոցի անկիւնումը լապտերի առաջեր կանգնած էր մի պատանի ոտաբորիկի, շուրբը պատառոտված, զլիսին էլ մի առանց կողէրօկի ֆուրաժէկա դրած: Նա արտասուք թափելով ողորմութիւն էր խնդրում անցորդներից: Շատ քիչերը մի կոպէկ տալիս էին, իսկ միւսները Աստուածտայի էին ասում և անցնում, կարծես թէ Աստուած փողը ձիւնի հետ ներքեւ էր թափելու:

Աօթիկակուլին, ասաց մի երիտասարդ և իր ընկերների հետ մօտեցաւ պատանուն:

—Դէ, Լօթիկակուլի, մէկ բարձրացիր այդ լապտերի ծայրումը զլիսիդ վրա կանգնիր, քեզ փող եմ տալու:

Լօթիկակուլին կապիկի նման ծալեց թեկերը,

բարձրացաւ լապտերի գլուխը և բռնելով հօրիզոնական փայտից գլուխը դրեց լապտերի ծայրին, իսկ զոյգ ոտները շիտակ բարձրացրեց դէպի վեր:

„Պահ, քո հօր տունը չը քանդվի, ինչ լօթին է,“ ասացին երիտասարդները և երկու կոպէկ տալով հեռացան:

Տեսնում ե՞ս, ընթերցող, այն մանուկը, որը մեծ ապագայ էր խոստանում այժմ „Լօթիկակուլի“ է անուանվում: Այն մանուկը, որ աղաներին կրակոտ պատասխաններ էր տալիս, այն մանուկը որը ասում էր „Ես ոչ ոքի իրաւունք չեմ տալ ինձ ծեծելու“ երկու կոպէկի համար ի՞նչ խայտառակ դրութիւն է ընդունում:

Նա շարունակում էր գիշերները քնել աւերակ խանութի մէջ: Առաւօտ շուտ զարթնում էր, գընում, Այսկամ աղբիւրումը՝ լուացվում և սկսում աղքատութիւն անել: Քանի տներից խնդրեց նա, որ իրան ծառայ վերցնեն, բայց ոչ ոք չը համաձայնեցաւ, ասելով թէ քաղաքացի ծառան անպէտք է լինում, ծառան պիտի գիւղական լինի, այն էլ հեռու գիւղերից, որ շուտ չը փախչէ: Միւս կողմանէ Աէյրանի անունը արդէն հռչակուած էր որպէս մի փուչ կենդանի և սա զըրպարտութիւն չէր այժմ: Նրա մէջ մեռել էին արդէն բոլոր այն աղանիւ զգացմունքները, որոնց ստեղծել էին թամամը և ուսումնարանը և սա շատ բնական է:

ԱԵւ մին առակ էլ ասաց նրանց: Եւ ահա մէկ սերմը ցանող մարդ դուրս ելաւ դաշտը, որ սերմը ցանէ: Եւ եղաւ որ այդ սերմերից մէկն ընկաւ փշերի մէջ և կանաչեց: Բայց փշերը խեղտեցին նրան: Ա. Յ. Դ փշերը մեռցրել էին Սէյրանի սրտի մէջ դեռ արմատ չը բռնած ծառը: Սատանայ Պետրոսի զըրպարտութիւնները և այն սարսափելի նեղութիւնները որոնց նա այժմ ենթակայ էր, մեռցրել էին նրա ազնիւ զգացմունքները, բայց մէկից, սիրոյ զգացմունքից, որը վառ էին պահում նրա սրտում թաշգուհու նրա հետ ունեցած հաղուագիւտ տեսութիւնները:

Միայնակ մուրալով ապրել չէր կարողանում նա և երբեմն գողութիւն էր անում: Թէև որքան էլ մարդ նեղութիւնների ենթակայ լինի, պիտոյ է գողութիւնը անազնութիւն համարէ և չանէ, բայց ախր այդ կարելիէ պահանջել Սոկրատէսից և Պղատօնից, և ոչ թէ մի աչքաթող արտած պատանուց:

Սէյրանը տեսնելով որ բոլորովին մթնել է, գնաց մէկ մանրավաճառի մօտ և իր ժողոված կոպէկներով գնեց մի հաց ու մէկ մոմի որովհետեւ ջրօրհնէք դիշեր էր և գնաց իր բնակարանը: Մի և նոյն դիշերը, չը մոռանամ ասել, բարեպաշտ մարդիքը Աստուծոյ անունով գինի էին կոնծում:

Ա. Յ. Պէս մեծացյաւ որբիկը և քսան տարեկան եղաւ:

VII.

Գարնան գիշեր էր: Կրինակամարի վրա մի կտոր էլ ամպ չը կար և ասաղերը փառաւորապէս կատարում էին իրանց պաշտօնը: Ամբողջ քաղաքը քնած էր: Միայն զարթուն էր մի 20 տարօք երիտասարդ, որը նստած էր մեզ ծանօթ հին միկիտանիսայի փշրված պատուհանի առաջելը դրած մեծ քարի վրա: Իհարկէ նա Սէյրանն էր, որը ժամը 9-ին ընկել էր քնելու, բայց մտածմունքներից տանս ջվելով չէր կարողացել: Ա. Յ. Ժ դուրսը նստած նա դարձեալ խորասուզվել էր մտածմունքների մէջ: Նա յիշում էր իր ծնողներին, յիշում էր այն ժամը, երբ Թամամը ծիծաղելով ասում էր. „Երբ մեծանաս, փող աշխատես, այն սիրուն աղջկան քեզ համար կառնեմ:“ „Մեծացել եմ ահա մայր, բեսերս դուրս են եկել իսկ այն սիրուն աղջկան այսաօր կամ վաղը կը տանեն. դէ ի՞նչ ես սառն հողի տակ պառկել:“, Նա մտաբերում էր այն բազմաթիւ խօսքերը, որ ինքը հարցնում էր մօրիցը, որը պատասխանում էր թէ „Կը մեծանաս, կիմանաս:“ Եւ նա սկսեց ինքն իրանից յօրինել և երգել հետեւեալ տողերը:

Ի՞նչու, մայրիկ, ինձ ասա՛,  
Ի՞մ հագուստն է միշտ մաշված  
Ներսէս աղանց Մովսէսը,  
Մետաքսիցն է շոր հագած:

Որդիս, ամեն բան ունի  
իր պատճառը անկասկած,  
Բայց լաւ է դու չիմանաս,  
կը մեծանաս, կիմանաս;  
  
Մայր, ի՞նչու ամեն մարդիք,  
Զեն սիրում ինձ, խօսացնում,  
Ներսէս աղանց Մովսէսին,  
Գրկում են ու համբուրում;  
  
Որդիս, այդ պատճառ ունի,  
Առանց պատճառ բան չի կայ,  
լաւ է դու այդ չիմանաս,  
կը մեծանաս, կիմանաս;  
  
Բայց ի՞նչու վարժապետը  
իմ վրա բարկանում է,  
իսկ Մովսէսի հետ միշտ  
Քնքշութեամբ խօսում է:  
  
Բաւական է, սիրելիս,  
Գլուխս ի՞նչ ես ցաւացնում:  
Շատ բան լաւ չէ իմանաս,  
կը մեծանաս, կիմանաս;  
  
Նա դեռ վերջին տողը չէր վերջացրել երբ  
նկատեց որ մի օրիորդ կարմիր շալի մէջ փաթաթ-  
ված մօտենում է իրան:  
  
„Այդ, դու ե՞ս,“ ասաց նա շիոթվելով:  
—Այո, ես եմ, սիրելի, եկել եմ քեզ մի շատ  
տխուր լուր յայտնելու:

„Ի՞նչպէս տնից դուրս եկար, մայրդ չիմացա՞ւ:  
Ի՞նչպէս մէնակ եկար:  
—Ամենքը քնած էին: Ինչի՞ց պիտի վախենամ,  
ինձ համար այժմ մի և նոյն է ապրել թէ մեռնել:  
Գիտես ի՞նչ է, Սէյրան, ինձ նշանեցին այս գիշեր  
և կիրակի օրը կը պատկեն. օրիորդի կոկորդը բռնվեց  
արտասուբից:  
„Ուրիշ կերպ չէր կարելի սպասել նազելի: Ես մի  
փշացած երիտասարդ եմ և այդպէս էլ պիտի  
մեռնեմ: Ես ինձ ուրախ կը զգամ, եթէ գոնեա դու  
երջանիկ լինես:“  
—Ոչ ես չեմ կարող նրա հետ ապրել... ես ինձ  
անպատճառ կը սպանեմ:  
„Ո՞վ է նա:“  
—Աբէլ աղան, այդ անպիտան ծերունին: Դեռ  
երէկ ես նրա վրա նամակ եմ զրել որ ինձանից  
հեռանայ, բայց նա ծածկելով իմ նամակիս պարու-  
նակութիւնը, և ստորագրութիւնս ցոյց տալով՝  
պարծեցել է ուրիշների մօտ:  
—Սիրելիս, եթէ նա զինի, մի ուրիշը պիտի լինէ  
ինձանից ի՞նչ կարող ես յուսալ, որ ինքս էլ սոված թմէ  
մեզ բաւական է... չիմայ ես եկել եմ խորհուրդն  
հարցնելու:  
—Եթէ այդպէս է, ես կը հոգամ: Արի քեզ այցել  
տուն տանեմ, որ հանդիսա քնես: Գնա, Վահանին

եղիք, և թոյլ չեմ տայ որ այն գազանը բեղ կլանէ:

Երիտասարդը համբուրեց օրիորդին, տարաւ մինչեւ նրանց փողոցի դուռը, ինքը վերադարձաւ և դառն արտասուք թափեց: Նա մտաբերեց այն ատրածանակը, որ մի անգամ գողանալով թաղել էր իր բնակարանի մօտ: Գետինը քանդեց, հանեց նրան և ձեռին խաղացնելով ներս մտաւ որ քնէ:

### VIII.

Կիրակին գիշերացել էր, երբ ներսէս աղանց բոլոր սենեակները, դահլիճը սրահները, բակը, փողոցը լիքն էին տղամարդկանցով, կանանցով, օրիորդներով, երեխաներով: ... Բոլոր սենեակները շքեղ զարդարված էին: Դահլիճին ահագին կանթեղները եկեղեցու կերպարանք էին տալիս: Բակում կախված էին գոյնզգոյն լապտերներ, որոնք լուսաւորելով պարտիզի ծառերը մի հրաշալի տեսարան էին ներկայացնում: Փողոցը նոյնպէս լոյս էր շնորհիւ բազմաթիւ ջահերի: Ամեն տեղ շարժմունք, ամեն տեղ կենդանութիւն էր տիրում: Ամենքի սրտերը ուրախ էին: Օդն էլ ուրախութիւնով լցված էր: Միայն մի շատ փոքրիկ տեղ թագաւորում էր տրտմութիւնը. այդ թագուհու սիրան էր: Նա հագած թանգագին հագուստներ, զարդարված քարեղէններով, նստած էր փոքրիկ սենեակում, շրջապատված դեռահաս օրիորդներով:

“Ճանապարհ բացէք, երեխայք հեռացէք.... տեն տուէք, ասացէք պատրաստ լինեն. խնամնք գալիս են, “ աղաղակում էին ամեն կողմից: Ամենքը շփոթվեցան և սկսեցին դէս ու դէն վազել: Ֆայետօնները, կառքերը կանգնեցան մեծ դրան առաջելը: Խնամնց մարդիկը փեսային շրջապատած ներս մտան բակը:

— Համեցէք, Արէլ աղա, աչքիս վրա տեղ ունէք, խօսեց Ներսէս աղան և նորեկները մտան դահլիճը:

Բայց դու, ընթերցող, դեռ մի մրանիր. բեզ պիտի ծանօթացնեմ նոր փեսայի հետ:

Քառասունուհինդ տարօք, միջակ հասակով մի մարդ, որի թշերը եփած խնձորի, իսկ ծակատը թրջած կաշու էին նմանում: Գլուխը մազերով, այդպէս ասած, ոչ թէ ծածկված էր, այլ շրջապատված, որովհետեւ մէջ տեղում մի կոլորակ առանց մազի տարածութիւն կար: Երեսը ածիլված էր, իսկ բեխերը մանրիկ էին:

Վերարկուի կռները ուսերին գցած, բուխարի մորթուց գտակը զլիսին. և մէջըին ոսկէ գօտի:

Նա սաստիկ հարուստ էր. ունէր շատ տներ, այդիներ և ձիերի երամակներ: Իր բնակած տունը այնքան գեղեցիկ էր, որ եթէ Սուլթանին ընդուռնելու լինէր, ամօթ քաշելու բան չը պիտի ունենար: Ծառաները թուրքեր էին, աղախինները ռուսներ:

Երբ նա շուկայում յայտնվում էր, ամենքը առանց ազգի խտրութեան աշխատում էին զլուխ

տալ նորան, թէև մաքներումը միշտ հահոյում  
էին, որովհետեւ խանութների ըրէհը օրից օր թան-  
գայնում էր: Այդ կարծ նկարագրութիւնը անե-  
լուց յետ, ես կը տամ քանի մի տեղեկութիւններ  
նրա անցրած կեանքի մասին, որպէս նիւթեր նրա  
կենսագրութիւնը դրել ցանկացողների համար:

1. Երբ քսան տարօք էր, մի անգամ նա բոլո-  
րովին դեղին գոյն է ստանում: Դիմում է մի յա-  
յտնի պառաւ կնոջ, որը խորհուրդ է տալիս դեղին  
քարբար (յանձնարք) խաղացնել ձեռին, որ դեղնու-  
թիւնը անցնէ: Նա փորձում է, բայց օգուտ չէ  
ստանում: Վերջը դիմում է բժիշկներին, որոնք  
յայտնում են թէ հիւանդութիւնը... և բժշկում են:

2. Մի քանի տարուց յետ մի գիշեր նրա միրուքը,  
բեխերը և յօնքերը թափվում են, բայց դեղերի  
դիմելով ի հարկէ, դարձեալ ստիպում է նրանց  
բունել:

3. Օտարութիւնում դատաստանի է ենթարկ-  
վում նա մէկ օրիորդի անպատւած լինելով, բայց  
ազատվում է շնորհիւ դեղին ոսկիների:

Ո՞վ է այդ թուրք պատանին, որ այդպիսի  
երկար մազեր ունի:— Աբէլ աղի բարեկամն է: Ո՞վ  
է այդ կինը:— Այն ինչ մարդու կինն է, որ այժմ  
անառակ է: Ո՞վ է նրան առաջին անգամ ճանա-  
պարհից հանեց:— Աբէլ աղան: Մնացեալները ինք-  
ներդ ասացէք:

Ահա թէ ում էր տալիս ներսէս աղան իր  
միակ աղջիկը: Այս երեսդ սև լինի փեսայիդ  
հետ միասին, ներսէս աղա: Տարակոյս չը կայ որ  
նա կարող էր օրիորդին կին դարձնել բայց միշտ կը  
սիրէր նրան: Ես չեմ կարծում:

Դահլիճը թնդում էր խմիչքը խմիչքի ետևիցն  
էր գալիս: Ոչ ոք իր խօսածը չէր լսում: Այդ խառ-  
նակութեանը վերջ տուեց տէր նզեկիելը հրամա-  
յելով պատրաստվել: Օրիորդը հագնուած էր եւրօ-  
պական ձեռվ, բայց երեսը ծածկված էր: Երբ բա-  
հանան հրամայեց ձեռք ձեռքի տալ, Աբէլ աղան  
ձիու նման խրինջաց և ձեռքը մեկնեց: Օրիորդի  
ձեռքն էլ կանայքը բռնեցին և տուին փեսային:  
,,Ի՞նչու է լաց լինում, Հարցրեց քահանան:

— Ոչինչ, այնպէս, պատասխանեց աղջկայ հայրը:  
Տէր նզեկիելը վերջացրեց իր գործը և ճանապարհ  
ընկան եկեղեցի:

Զեմ կամենում երկարացնել: Եկեղեցում պսա-  
կը կատարեցին: Միայն ուշադրութեան արժանին  
այն է, որ երբ քահանան օրիորդի համաձայնու-  
թիւնը հարցրեց, օրիորդը դլուխ չէր կամենում  
տալ: Մօտը խմբված կանայքը յետեի կողմից փոքր  
ինչ Ճնշեցին գլուխը դէպի առաջ: Տէր նզեկիելը  
թէև այդ նկատեց, բայց, երեխի ի պատիւ աղաների  
շարունակեց իր գործը:

Եկեղեցու բակի դռնից դուրս էին գալիս ապագայ

ամուսինները ձեռք ձեռքի տուած: Աթրըքի բար-  
ձրացաւ ատրձանակի ձայնը:

,,Փեսան մեռաւ: աղաղակեցին մի կողմից:  
,,Լօթիկակուլին, լսվեցաւ փոքր ինչ հեռուից:

IX.

Վերոյիշեալ դէպքից անցաւ ուղիղ հինգ տարի,  
որի միջոցում ամեն բան մոռացիցաւ: Թագուհին  
էլ թոքախտ ստացաւ, մեռաւ և նոյնպէս մոռաց-  
վեցաւ: Այժմ Բ. քաղաքի ժողովուրդը մի ուրիշ  
հարցով էր հետաքրքրվում: Սիրիրից փախած մի  
խումբ աւաղակներ կարել էին բոլոր ճանապարհները:  
Գիւղերից քաղաք և քաղաքից գիւղերը վախենում  
էին գնալ և այս պատճառով առևտուրը դադարել  
էր: Կրագիրները լիքն էին աւաղակների մասին ստաց-  
ված տեղեկութիւններով: Մի օր գրում են, „անցեալ  
շարաթ աւաղակները թագնվում են քաղաքից  
մինչեւ Ք. տանող ճանապարհի վրայ և ամեն մի  
անցնողին կողոպտում են ու ոտները կապելով տա-  
նում են անտառը: Այդպէս մի օրվայ մէջ 50 մարդիք  
են կողոպտվում: Մի ուրիշը գրում է. „Երեկ ցերե-  
կով աւաղակները մտնում են Մ. գիւղի եկեղեցին,  
որտեղ աւաղակապետը խփում է վարդապետի երեսին  
և հրամայում է բոլոր թանգակին իրեղէնները  
ժողովել:“ Դարձեալ գրում են. „այս օրերը քաղաք  
բերին վաճառական Ներսէս աղի և գտակակար

սատանայ Պետրոսի անգլուխ դիակները:“

Հասարակութիւնը ամեն մի լուրը լսելուց  
անիծում է, հայհոյում է աւաղակներին, բայց  
ոչ ոք չը գիտէ, թէ այդ խմբի պետը հասարա-  
կութեան և հասարակական կազմակերպութեան  
պրտուղն է, ոչ ոք չը գիտէ որ նա Ակյրանն է:

Հարցրէք վերջինից, թէ ինչու է այդքան  
մարդկանց կողոպտում: Նա կը պատասխանէ, „Ես  
կողոպտում եմ այն մարդկանց որոնք, կարող էին  
խնամել ինձ բայց անտէր և անդաստիարակ թողեցին:“

Զարմանալի քաղցրութիւն է զգում մարդ, երբ յիշում է իր անցած օրերը, եթէ մինչև անս գամ տխուր անցած լինեն նոքա: Այդ պէս էլ քաղցր է ինձ համար մտարերել իմ ուսանողական տարիներս, երբ ցերեկվայ մեծ մասը ուսումնարանումն էի անցուցանում: Միմեանց ետեից ներկայանում են ինձ բոլոր նեղութիւնները, որ կրում էի ես այն ժամանակ, բոլոր ուրախութիւնները, որ վայելում էի իմ դասընկերներիս հետ: Ամեն բան առանց բացառութեան քաղցր է ինձ յիշել: Ես այժմ սկսում եմ սիրել մինչև անդամ իմ վատ ընկերներիս:

Բայց երբ միտսէ գալիս իմ մի սիրելի ընկերս, որը վերջապէս դժբաղդացաւ, որովհետեւ գիտութիւնը, ուսումը, շատ էր սկրում, ես ընկնում եմ խոր և տխուր մտատանջութեան մէջ: Նոյն իսկ իմ այս ընկերիս պատահածը ես այսօր պիտի պատմեմ ընթերցողիս, որպէս զի թէ իմ սիրտը փոքր ինչ թեթեանայ, թէ միւս ուսանողները զգոյշ լինեն, եթէ հանգամանքները մի և նոյն դրութեան մէջ դնեն և իրանց:

Մի և նոյն դպրոցումը, որտեղ ես էի, ուսանում էին նոյնպէս երկու եղբայրներ, ազգով հայ, կրօնով լուսաւորչական: Սոքա Շ. գաւառի, Գ. գիւղի տէր Աւետիք քահանայի որդիիքն էին: Տէր հայրը այնքան կարողութիւն ունէր, որ հազիւ էր իր ընտանիքը կերակրում: Նա թէպէտ այնքան էլ մեծ ուսում առած մարդ չէր, բայց և այն տգիտ քահանաներից չէր, որոնց մասին շատ անդամ գանգատումներ են լսվում մեր լրագիրներում: Նա այնքան սիրում էր լուսաւորութիւնը, որ չնայելով իր փոքրիկ կարողութեանը, երկու որդիներին Պօղոսին և Պետրոսին ուղարկեց Բ. քաղաք, բէալական դպրոցումը ուսանելու: Երբ վերջիններս առաջին անդամ Ճանապարհ էին ընկնում, տէր հայրը մի փոքրիկ Ճանապարհիկ յատկութիւնները թէւ որդիիքը այդ վագուց գիտէին: Որքան էլ Պօղոսը և Պետրոսը լաւ սովորած լինէին տէր հօր մօտ իրանց դասերը, այնուամենայնիւ չը կարողացան մտնել առաջին դասատուն, որովհետեւ ուուսերէն լեզուի մէջ շատ թոյլ էին ինչպէս շատ հայ աշակերտներ. նորանց ընդունեցին պատրաստականի մէջ:

Ես բնաւ միտք չունեմ մանրամասն պատմելով հասցնել քահանայի որդիներին բարձր դասատունները որովհետեւ յիշեալ մանրամասնութիւնները նշանակութիւն չունեն իմ պատմութեանս համար, մաս-

— 36 —

նաւանդ որ ես ինքս ծանօթացել եմ դորանց հետ  
առաջին անգամ հինգերորդ դասատան մէջ։ Միայն  
մի քանի խօսքով կը նկարագրեմ դորանց պատկերը՝  
որպէս զի ընթերցաղը նախապէս ծանօթանայ իմ  
հերոսներիս հետ։

Երկու եղբայրները բոլորովին նման էին միմեանց  
թէ ներքին և թէ արտաքին կերպով այնպէս որ  
դժուար էր լինում նորանց միմեանցից որոշել։ Երէցը  
Պօղոսն էր, որովհետև միւսից երեք րօտէ առաջ  
էր աշխարհ եկել։ Երկուսն էլ միատեսակ կեանք  
էին անցկացնում։ Պատահում էր որ Պօղոսը լաւ  
չէր պատասխանում իր դասը արդէն ուսուցիչը  
համոզվաց էր, որ Պետրոսն էլ չէ սովորել։ Նախա-  
խնամութեան այդպիսի հաւասարասիրութիւնը  
անեկտօտի ձև էր ստացել դասատան մէջ, այն-  
պէս որ երբ մի անգամ Պետրոսը իր անզգուշու-  
թիւնից ուսումնարանի ոչ այնքան բարձր պատու-  
հանից փողոց էր վայր ընկել, ընկերները Պօղոսին  
էլ նոյն տեղից ներքեւ գլորեցին։

Քահանայի որդիքը բաւական աշխատասէր և  
ընդունակ էին։ Նորանք ուսուցիչներից ճանաչված  
էին որպէս համեստ և ազնուաբարոյ աշակերտներ,  
թէպէտ Պետրոսը շատ էլ համեստ չէր։ Չորրորդ  
դասատնից սկսեալ նորանք շատ նեղութիւն չէին  
տալիս տէր հօրը, որովհետև շատ անգամ աշա-  
կերտներ էին պատրաստում և մի կերպ ապրում

էին, եթէ միայն կարելի է այդպէս ասել ցէրեկը  
անդադար աշխատելուն և գիշերն էլ դասերի պատ-  
ճառով անքուն լինելուն։ Ի միջի այլոց չէին մո-  
ռանում նրանք հայերէն գրեթե ընթերցանութիւնը  
և այդ պատճառով չը մոռացան իրանց հօրից սո-  
վորած հայերէնը այլ ես աւելի առաջ գնացին նորամէջ։

Վերևումը ցոյց տուինք, թէ որքան միմիանց  
նման էին Պօղոսը և Պետրոսը. բայց մոռացանք  
յիշել մի բան, որով զանազանվում էին նորանք։  
Մեծ եղբայրը միշտ գործի սկիզբին էր նայում, իսկ  
կրտսերը վերջին։ Պօղոսը այն բանն էր սիրում, որը  
լաւ և օգտակար է ճանաչված ամենքից, իսկ Պետ-  
րոսը այն ինչ որ կարող էր լաւ հետեանքի հասցնել։

Մի գիշեր, յունիս ամսի սկզբում, մենք  
եօթներորդ դասատան աշակերտներս՝ հրաւիրված  
էինք տէրտէրի որդիների բնակարանը (այդպէս  
մենք էինք կոչում)։ Սա այն օրն էր, որ Պօղոսը և  
Պետրոսը վերջացրել էին բէալական դպրոցում  
ուսման շրջանը։ Նորանք հրաւիրել էին մեզ, որ  
միասին խորհրդակցենք նոյցա ապակայի մասին։  
Մենք երկար ականջ էինք գընում երկու եղբարց  
համեստ վիճաբանութեանը։

,,Պետրոս,“ ասում էր Պօղոսը, երբ առաջինը  
հակառակվում էր այն մտքին, թէ հարկաւոր է  
իրանց գնալ Ռուսաստան, բարձր ուսում ստանալու,  
,,դու լաւ հասկացիր, որ եթէ մի գեղեցիկ և

Հետաքրքիր բան կայ աշխարհիս երեսին, այս գիւտութիւնն է. ։։։

Բայց դու էլ լաւ իմացիր, պատասխանում էր կըրտսերը, որ եթէ մի մարդ իր տկարութեան պատճառով դժուարութեամբ ձեռք բերած գիւտութիւնից օգուտ քաղել չէ կարողանալու, ոչինչ չարժէ այն մարդն էլ իր գիտութիւնն էլ:

„Անբան կենդանիներն էլ կատարեալ առողջութիւն են վայելում շատ անդամ, բայց ո՞վ կը կամենայ նորանց նմանվելով պատասխանեց Պօղոսը հանդարդութեամբ։

— Ի՞նչ անեմ ոսկէ լազանը, որ նորա մէջ արիւն պիտի թքեմ, միւս կողմից մենք ունենք գիտութիւն կոչված մնդուկի բանալին և կարողենք առանց հեռու գնալու գիտութեանց հետ բաւական ծառ նօթանալ, այն չափ որ բաւական է մեր կեանքի գլխաւոր երեսյթները հասկանալու և հասարակութեան պիտանի անդամ լինելու համար։

„Համեմատելով մեր իմացածը լավուազիէյի, դարվինի հետ, մենք ի հարկէ բոլորովին տգէտ ենք՝ ասում էր Պօղոսը։

Եւ այդպէս մէկը չափազանց ուսումնասէր լինելով կամենում էր, որ երկուսն էլ գնան ուսանելու, իսկ միւսը նկատելով որ երկարամեայ նեղութիւններից և չափազանց աշխատանքներից իրանց առողջութիւնը բաւական քայքայվել է և գնալով

հիւսիս, գուցէ էլ աւելի տանջանքների պատահեն, որ անշուշտ իրանց անձը վտանգի կենթարկէ, խորհուրդ էր տալիս եղբօրը բաւականանալ ունեցածով և յետ գնալ հայրենիք մի գործով պարապելու։

Վէճը վերջացաւ ընկերների միջամտութեամբ, որոնք որոշեցին որ երէց եղբայրը գնայ իր կամեցածի համեմատ Պետերբուրգ բարձր ուսաման ետևից իսկ կըրտսերը գնայ հայրենիք և այնտեղ մի գործով զբաղվելով իր կարողութեան չափ նպաստէ երէց եղբօրը։

Մի ամսից յետոյ մի կիրակի առաւօտ Պօղոսին նաւով Ճանապարհ դրինք դէպի Ուսուսաստան, իսկ Պետրոսը քննութիւն տալով ուսուցչական վկայական ստացաւ և գնաց իր հայրենիքը։

Գալով Գ. գիւղը նա նախ տեսութիւն գնաց գիւղի բոլոր ընտանիքներին և ապա խնդրեց տէր հօրը, որ մի օր գիւղի նշանաւոր մարդկանցից ժուղով կազմէ, որ խօսվի գիւղի մէջ ուսումնարան բացելու մասին։ Որովհետեւ տէր Աւետիքը եր բարի ընաւորութեամբ մեծ համակրանք էր վայելում գիւղական հասարակութիւնից, ուստի կիրակի երես կոյեան բոլոր հրաւիրվածները նշանակված ժամին ներկայացան։

Քահանան երկար խօսելով կարողացաւ շատերին հասկացնել, որ ուսումնարանը իրանց մեծ գիւղի համար անհրաժեշտ է։

Կրթված և համակրանք վայելող բահանան ի՞նչեր չէ կարող անել զիւղայու համար մանաւանդ եթէ որդին էլ կատարելագործված մարդ է և պատրաստ է ամեն բան դոհել շրջապատող հասարակութեան մէջ կրթութիւն տարածելու համար։ Հայրը և որդին մեծ աշխատութիւն գործ դնելով կարողացան մի տարվայ միջոցում մի փորբիկ ուսումնարան կառուցանել և ժաղովեցին առ ժամանակ մօտ 30 մանուկներ, որոնց հետ սկսեց պարապել Պետրոս վարժապետը։ Մի բանի տարվայ մէջ ուսումնարանը ծաղկեց և անուանի եղաւ շրջապատող գիւղերի մէջ, այնպէս որ վերջին տեղերից ումանք մանուկներ էին բերում Պետրոս վարժապետի մօտ։

Հենց այդ ժամանակները Պետրոսը պսակվեց Շ. գաւառի մի ոչ այնքան հարուստ և ոչ այնքան աղքադ օրիորդի հետ, որը թէե այն գեղեցկուհիւներից չէր, որոնց շատ անգամ պատահում է մեզ կարդալ րօմանների մէջ, բայց բաւական դուրեկան դէմք ունէր և որ զլսաւորն է կրթված էր։ Նա էլ քիչ չէր օգնում ամուսնուն նորա ձեռնարկութեան մէջ։

Մի առաւօտ Գ. գիւղում երկինքը չափազանց պարզ էր։ Եղանակը ախորժելի էր, որովհետեւ գիւղը փոքր ինչ անձրել էր։ Գիւղացիները տեղ տեղ խմբված խօսակցում էին։ Ամենքի դէմքերը տիսուր էին։ Եկեղեցու զանգակը ծանր կերպով հն-

չում էր և լսողների սիրտը հալ ու մաշ անում։ Այդ տիսուր հնչիւնները գուժում էին տէր-Աւետիքի երեց որդոյ թաղումը։

Անբաղտ Պօղոսը Պետերբուրգ գնալով մտել էր տէխնօգիական ինստիտուտ և սարսափելի տան-ջանկներ կրելով հասել էր վերջապէս երրորդ կուրսին։ Հենց այդ ժամանակ հիւսիսային պաղ կլիման ազդեց բոլորովին տկարացած Պօղոսի վրա։ Նա թօքախտ ստացաւ և վերադարձաւ Գ. գիւղը 1878 թ. գարնան սկզբում։ Հայրենիքում նա փոքր ինչ լաւ զգաց իրան, բայց երբ աշնան անձրենները սկսեցին տեղալ, կրկին մտաւ անկողին և էլ չը վերկացաւ։

Անցեալ տարի ես գնացել էի Գ. գիւղը փոքր ինչ ման գալու և իջևանել էի տէր Աւետիքի տանը։ Պետրոսը ցոյց տուեց ինձ ուսումնարանը, որի մէջ բաւական աշակերտներ կային։ Ուսումնարանին կից տեսայ ես մի փոքրիկ սենեեակ, որ գրատարան էին կոչում, ուր մի պահարան գրեանք կային և սեղանի վրայ գիզված էին հայոց յայտնի լրագիրները և ուսուաց „Սեմյա և Ռուլա“ ամսագիրը։

Կէսօրից յետ Պետրոսը ինձ տարաւ գերեզմանաւ տուն և ցոյց տուաւ ինձ մի տապանաքար, որի մի կողմումը գրած էր „այս է տապան Պօղոսի, որդոյ տէր Աւետիքի, որ հանգեաւ ի Տէր յամի Տեառն 1878:“ Իսկ տապանաքարի միւս կողմումը թէպէտ ոչինչ չէր գրած, բայց ինձ թւում էր թէ գրած է հետեւալը։ Լաւ է ոտի մատ լինել, բայց առողջ, քանթէ զլիսի աչք լինել, բայց կոյր։

ՀԱՅՈՒԱԳԻՒՏ ՄԱՆՈՒԿ:

Քո խօսքերը, փոքրիկ մանուկ,

Թէև գեռ մանկական են,

Աստուածատուր կայծի նշան

Նոցա մէջ երեսում են:

Սա այն կայծնէ, որ չէ ստացվում,

Արհեստական միջոցով,

Սա այն կայծն է որ բիւրաւոր,

Մարդոց մէկն է ունենում:

Բայց, ա՞խ, մանուկ, իմ սիրելի,

Արդեօք այդ կայծն կը վառուի,

Թէ աննպաստ բամիների

Ուժեղ շունչից կը հանգչի:

Եթէ քո կայծն կը պահպանուի

Հիւսիսային հողմերից,

Ելէքտրական պայծառ լոյսը

Յառաջ կը գայ նորանից:

Բայց թէ կեանքիդ անիւները

Ապառաժաց կ'հանդիպեն,

Աստուածանից ընտրեալ կառքը

Անտունտի մէջ կը կօրեն:

Զ Ա Ն Գ:

Զանդակատան բարձրութիւնից,

Զանդ, հ՞եր ես միակերպ հնչում:

Մի՞թէ բոլոր ննջեցելոց

Դու հաւասար ես կարծում:

Երբ ննջում է ազնուասիրոտ

Երիտասարդ եռանդուն,

Հնչէ՛ տխուր, որ ամենքի

Սիրտն լնինէ դըզըրդիւն:

Երբ ննջում է խեղճ օրիորդ

Զոհ շահասէր ծնողաց

Խորհրդաւոր հնչէ ձայնդ,

Եւ ախրեցուր լսողաց:

Երբ ննջում է Ճշմարտասէր

Սուրբ մտքերի քարոզիչ,

Այն ժամանակ հնչէ տխուր

Եւ տարածէ սուզգ այլուր:

Բայց երբ մեռնէ անգութ աղան

Որ չէր լսում իւր խղճին,

Զրնդզրնդացրու քաղցր ձայնդ

Ուրախացրու ամենքին:

Երբոր մեռնէ տղէտ կղեր,

Ազատութեան թշնամի,

Մխիթարիչ հնչէ ձայներ,

Որ բերկութիւն տարածուի:

Եւ երբ մեռնէ մարդ ինքնասէր,

Օծանման ու խարդախ,

Այն ժամանակ հնչէ ուրախ,

Տխուր երբէք մի հնչէր:

Հայրի՛կ, այդպէս շուտ ո՞ւր ես գնում դու,  
Դեռ ութն եմ տարօք ո՞ւր ես ինձ թողնում,  
Ո՞վ կըտայ ինձ տուն, ո՞վ կըտայ սընունդ,  
Հայրի՛կ, գնում ես, ինձ ո՞ւմ ես յանձնում:

Հայրի՛կ, ընկերներս դպրոց գնացին,  
Դպրոց գնալով ինձ լաւ ծաղրեցին,  
Որ իրանց պէս ես կարդալ չեմ կարում,  
Փողոցի միջին անգործ եմ մնում:

Հայրի՛կ, այդ ծաղրին ես չեմ դիմանալ,  
Ոչ ոք իմ ցաւը չուզում իմանալ,  
Հայրի՛կ առանց բեզ չեմ կարող ապրել,  
Ոչ ոք իմ արցունք չէ ուզում սրբել:

Լացեց մանուկը կլորուեց գետին,  
Փողոցի միջում աւանդեց հոգին  
Գիշերը անցաւ, լոյսը բացուեցաւ,  
Խեղճ որբի մարմինն հողին յանձնուե-  
ցաւ:

Միտդ է՞, երբ դու  
Խեղճ աղջիկ էիր,  
Դեռ գիմնազիօնում  
Ուսանում էիր:

Ի՞նչ իդէաներ  
Կային միտքումդ,

Սուրբ զգացումներ  
Պահուած սրտումդ:  
Ոյժմ դարձել ես  
Հարուստ տանտիկին,  
Ի՞նչու բժժացրել ես,  
Զգացումներդ անգին:

Միտդ է՞, երբ դու  
Խեղճ աղջիկ էիր,  
Դեռ գիմնազիօնում  
Ուսանում էիր:

ՀԱՅ ԽՄԲԱԳՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎԵՐԱՑ:

Դէ քնէ՛ այժմ անբաղտ խմբագիր,  
Թող հանգստանայ վրդովված սիրադ,  
Թող հանգստանայ հալածուած հոգիդ,  
Մոռցիր յաւիտեան քո սիրած ազգիդ:

Դու շուտ ջանացիր խաւարից հանել  
Քո փոքրիկ ազգը լոյս աշխարհ բերել  
Բայց հայր հասկանալ չուզեցին քո միտք  
Բոլոր բայլերիդ արգելք հնարեցին:

Քարոզեցի՛ր դու սէր ու միութիւն  
Բաժանուած եղբարց մէջնոր հաշտութիւն  
Բայց հայր հասկանալ չուզեցին քո միտք,  
Գեղ եկեղեցոյ ոսոխ կոչեցին:

Հային նոր սերունդ ստեղծել կամեցար,  
Լուսաւոր հոգով և ազնիւ սրտով,

Բայց հայք հասկանալ չուզեցին քո միտք:

Քեզանից իսպառ երես դարձնելով:

Քաջացէք, հայեր, մեծ բան գործեցիք,

Անձնուրաց գործչին վայր կլօրեցիք,

Դէ հետևեցէք այն գործիչներին,

Որ միշտ փաղաքշեն տգէտ կղերին:

Թողէք խաւարը միշտ տիրապետէ,

Մեր փոքրիկ ազգը խոր քնով քնէ:

Քաջացէք, հայեր, մեծ բան գործեցիք,

Անձնուրաց գործչին վայր կլօրեցիք:

Վ Ե Ր Զ:



၁၂၈၃ ခ ၃၀၅.

9684

2012

